

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՆՃ.
» Գաւառաց 40 ՄՆՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 ՄՆՃ.
» Գաւառաց 5 ՄՆՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
Նշանուցման տողը մէկ անգամի հաւ.
մար 3 դուրուշ, երկու անգամի հաւ.
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ օտարկութիւն կըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 16 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 25 մայիս.
Պ. Պոլսոյն սօնարարութեանը նիւթեր
գաւառէն երեսօթիսան ընտրուեցաւ:

Կառավարութիւնը՝ աղբային ժողո-
ւոյ՝ ներկայացնելով խնդրոց կարգին հա-
մար երեսնոց յանձնաժողովին հետ սի-
տի խորհրդակցել:

Հոռոմ 25 մայիս.
Կառավարութեան նախարարը մէկ քը-
ւէ մեծամասնութեամբ յաղթուեցան
խորհրդարանին մէջ, բայց չսկսեց հրա-
ժարիլ:

Պապը հիւանդ է:

Փարիզ 24 մայիս.
Պ. Թիւրք յիշատակէն եկած
պատգամաւորութեան մը պատասխանե-
լով ըսաւ թէ՛ աղբային ժողովը սկսեց է
ձանձխել իր անկարողութիւնը, և Սահմա-
նադրական խնդրոց լուծում մը տրը-
ւելու համար երկրին դիմելու հարկը:

Մատրիտ 24 մայիս.
Պատերազմի ասպարէզէն եկած լու-
րերը կը հաստատեն թէ՛ Բարսեւանը
Պիտքայի մօտ և Նախարարի ու Արախ-
ի մէջ յաղթուելու են:

Լոնտրա 26 մայիս.
Երկաթուղեաց և օտարահանքաց դու-
րաններուն մէջ նորէն աշխատութեանց
դադարում երևան ելաւ:

Փարիզ 26 մայիս.
Որդանեանք՝ ներկայ նախարարու-
թեան հակառակելու համար Պոնապարթ-
եանց կը մօտենան:

Պէրիտ 26 մայիս.
Հասարակաց կարծիքը Չիլիի խնդ-
րոց լուծման յետաձգուելուն վրայ դու-
շէ:

Լոնտրա 27 մայիս.
Օսմ. Բոսն. 47 1/16
Փոխ. 1865 —
» 1869 54 3/4
» 1871 64
» 1872 82 3/4
Անգլ. Բոսն. 93 7/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Նախարար Մեծ—Եպարքոս Բարձր.
Շիրվանի զատե Մէհմէտ Բիւշտի փա-
շան Հալէպի Կոնսակալ անուանեցաւ:

Վեհ. Սուլթանը 7500 զրը ամա-
կան կապեց արտաքին գործոց հը-
րաժարեալ նախարար Վսեմ. Բաշտ
փաշային:

Բաշլարի Էմիրին քայրը Մէքէ
ուխտի գնացած ըլլալով, այս շար-
թու Կ. Պոլսի եկաւ, և կայսերական
կառավարութեան կողմէ հիւրընկալ-
ւելով, յատուկ ապարանք մը բնա-
կութեան տրուեցաւ իրեն:

Վեհ. Սուլթանը՝ առաջարկու-

թեամբ Բարձր. Մեծ—Եպարքոսին՝
երրորդ կարգի պաշտօնատարութեան
աստիճան տուաւ Սպարապետի դրան
երկու Հայադղի ճարտարապետաց, Բա-
լուցի Աքնաուրեան Գովհանէս Է-
ֆէնտին և Երզնկացի Գովհանէս
Նիկողոս Էֆէնտին, որք երկուր տա-
րինքէ՛ ի վեր հաւատարիմ ծառա-
յութեանց և յաջողակ ճարտարու-
թեանց փորձեր տուած են տեղու-
թեան:

Մայրաքաղաքիս մէջ ծախուած
հային օխան, որ անցեալները 405
փարայի երած էր, Պետական խորհր-
դոյ որոշմամբ նորէն 400 փարայի ի-
ջաւ:

Արտաքին գործոց նախարարու-
թեան Միւսթէշար Բօսթաքի Ատո-
սիտէս փաշան երկուշարթի օրը Կ.
Պոլսի հասաւ Սամսէն և հետեւեալ
օրը իւր պաշտօնին գլուխն անցաւ:

Աղէքսանդրիայէն լուր կուտան
թէ Բուս. Բաշա Կարապետ Էֆէն-
տին նախարար անուանելու է փոխանակ
վսեմ. Նուպար փաշային:

Բերկուրութեամբ կը լսենք թէ
Վեհ. Սուլթանը Պալեան վսեմ. Գա-
կօր պէյն արքունի ճարտարապե-
տութեան պաշտօնին մէջ վերահաս-
տատելով՝ փարիզէն Կ. Պոլսի կանչել
հրամայել է:

Փոքր Ասիոյ սովատանձ Ժողովը-
րոց օգնութեան համար վսեմ. Սա-
տուլլահ պէյն նախագահած յանձ-
նաժողովին ձեռքը հաւաքուած օգ-
նութեանց դուամբը 209,385 զրը
հասած է:

Շիրքէթի խալիքի ընկերութեան
տնօրէն Հիւսէյին Էֆէնտին ձգուե-
ցաւ իր պաշտօնէն:

Գալօրդը դեռ ընտրուած չըլլա-
լով, առ այժմ՝ անօրէնութեան պաշ-
տօնն ընկերութեան առաջին քար-
տուղար Ահմէտ Բաղդալ Էֆէնտին կը
վարէ:

Ուրբաթ օրը մաքսատան եր-
կու պահապանք՝ Սիրքէթի խիլէթի
մօտը կուռի բռնուելով, մէկն զմիւսը
դանակով զարկաւ սպաննեց:

Երկուշարթի օրը Սիրքէթի խիլէ-
թի երկաթուղեայն կայարանին մէջ
սարսափելի դէպք մը պատահեցաւ:

Բուսնէի երկաթուղեայն ընդհա-
կէ մ'ի վեր վիճենաւ կը դառնէր, եր-
կուշարթի օրը մայրաքաղաքս կ'ըս-
պատուէր: Իւր սրբիւք՝ հայրենին
գիմաւորելու համար գեղէն իշեր է-
ին իրենց կառավարչուհայն հետ և
կայարանին մէջ կ'սպասէին: Կայարա-

նին դուրսը, որ դերմանացի մ'էր,
Պ. Շմիտի ութ տարեկան որդւոյն
հետ խաղալով հոն կեցած աղանի-
ական հին ատրճանակ մը ձեռքն ա-
ռաւ և կարծելով որ պարապ էր,
տղուն վրայ ուղղեց և կատակի հա-
մար վախցնել ուղեց, բայց ատրճա-
նակը պարպուելով խեղճ տղան կուրծ-
քէն զարնուեցաւ, և կէս ժամ ետ-
քը մեռաւ: Դիւրին է երեւակայել
տղուն դժբաղդ ծնողաց յուսահա-
տական վիճակը, երբոր կայարանը
հասնելով իրենց դաւակը դիակնաց-
եալ գտան:

Անցեալներն իւսկիւտար ոստի-
կանութեան զինուոր մը սպաննող
քիւրտ տաճիկն երեքշարթի օրը
կախուեցաւ իւսկիւտար, ոճիւրդ-
ժած տեղը:

ԴՐՆԱԿԱՆ

Ստորգ փաշայի ըրած դրամա-
կան կարգադրութեանց պայմաննե-
րէն շարունակելով, յաջող կամ ձախող
ենթադրութեանց և սկսալ կամ կե-
րակարծ ըրողներու համեմատ Օսմ.
ֆոնտաներուն ալ երեւել կը շարու-
նակէ թէ՛ Եւրոպոյ Պորտաներուն և
թէ՛ մայրաքաղաքիս հրապարակին
մէջ:

Երեքշարթի իրիկուն Օսմ. Բօն-
սօլիտէն 54,22ի գոյուեցաւ, բայց ե-
րէկ առաւօտ, Լոնտրայի և Փարիզի
հեռագիրները վար գալով, 53,20ի
բացուեցաւ, և մինչև 52,45 իջաւ:

Այս անակնկալ երեւելէն հարկ
չկայ ըսելու, մեծ վնասներ կը պատ-
ճառեն Պորտայի գործողութեանց ըզ-
րազոյններուն, և յաճախ նայելով
անցեալ շարթուքէն ի վեր՝ օգի վը-
րայ գործ ընող բազմաթիւներէն
շատեր կ'ործաներ են:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԷՍԿԱՏԵՐ ՈՒՄՈՒՄԻԷ

15 մայիս. հորեքշարթի իրիկուն	52.46
16 » հինգշարթի առաւօտ	53.10
բացուեցաւ	53.2
կէս օր	
Կ. Պոլսի 15 մայիս.	
Սօսիթէթ մէհէրայի բաժինը Անգլ. իր.	6.30
« ֆոխանակութեան »	4.30
Կ. Պոլսոյ Պաշային »	4.30
Քրէտի մէհէրայ »	9.45
Քրէտի Օսթրո-թիւրք	
Երկաթուղեաց հին	3ր. 143 1/2
նոր	94
Փոխ. 1863	» 338
» 1865	» 339
» 1869	» 279
» 1872	» 83
Փոխ. 1873	
Թրամուէյ	Օսմ. իր 5.50

ԸՆԹԱՏՔ ԴՐԱՄՈՑ

15 ՄԱՅԻՍ	
Անգլ. Դրա. դուրուշ	441.
Նոսթ. ոսկի »	88
Նոսթ. ոսկի »	90
Գործիք »	51, 25
Հինգ Գրան »	—
Հինգնոց »	405 40
Պղինձ »	124

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճան. ու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լս, Չինիլի խան, Մաթիսի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած նո-
թակ չընդունուիր:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ն

Սրբազան Պատրիարքին՝ Վեհ. Կա-
սեմ Ներկայանալու հրաւերն այս ի-
րիկուն կ'սպասուի, հաւանականաբար
շարթ առուր համար:

Ներկայութիւն ՎրԱՅ ԽՈՐՀՐԴԱՆՈՒԹԻՒՆԻՔ
Ե:

Ո՛վ որ սրտով հայ է, և որ կըմը-
տածէ, և որ աչք ունի և կը տես-
նէ, շատ գոհ է, շատ չնորհակալ է
Հասունեան Անտօն Պետրոս Թինի վա-
սըն զի առանց իր բազմամեայ աշխա-
տանացը՝ որով ջանաց իր Ժողովրդոց
սրտերը դառնայնել չէ օտարացնել
իր անձէն, հետեւապէս իր սկզբուն-
քէն, կարելի չէր:

Ա. Ի Լատինականութենէ հօգուով
և սրտով հեռացնել այդ կաթուղի-
կէ Հայոց մաս մը:

Բ. Լատինականութեան յարձա-
կումը և ծաւալումը արգելել, որ
շարունակ կը խորամտէր հայրենի ե-
կեղեցւոյն փարակը:

մարդ չէ, ուստի խօսիլ չայնպիսոյ
մը հետ՝ տկարութիւն պէտք է հա-
մարիլ:

Խոյ անոնց՝ որ շարունակ կը հար-
ցնեն թէ՛ Լեւոն պիտի ըլլան ասոնք,
որ բանադրեալ ի հոռոմայ և հերձ-
ւած համարեալ կը կուռն կը վիճին
և դարձեալ Հոռոմական կաթուղի
ինքզինքնին կանուանեն, կը պատա-
խանենք: Թէ որ Հոռոմայ Պապը և
իր յաջորդները Անտօնական չի հա-
մարուէին վատկանալ ժողովին վըճ-
ուով, թէ որ անկից վերջը կրկին կը-
կին կոնգրակներով բանադրանքը և
անոր արմատական պատճառները
նոյն Պապէն վերահաստատեալ չը-
լային, այնպէս որ այսօր բանադրան-
քին յետս կոչուին անսխալականու-
թեան հարուած մը չըբերէր, թերեւս
կարելի թուէր Հոռոմայ կողմէն յե-
տադարձ մը՝ որ մեծ դժբաղդութիւն
կը համարէինք Հայաստանաց եկե-
ղեցւոյն համար. բայց Պապը անսը-
խական է, ուրեմն իր վիճիւր ան-
դառնալի է: Խնդիրը կը մնայ թէ
բանադրեալ ժողովուրդը կը խոնար-
հի արդեօք, իր անհնազանդութեան
սխալմունքը կը խոտովանի, կը հը-
րաժարի այն հայրենաւանդ ըսուած
իրաւունքներէն և իր եկեղեցական
ընչից սեփականութենէն և մատա-
կարութենէն, մեզի առ ալ դժուա-
րին կերեւայ: Վստի զի ահա չորս տա-
րի կըլլայ որ բանադրանքը իր վրայ
կը ծանրանայ, և մէկ երկու անշան
և կեղակարծ քահանանքէ զատ (ա-
նոնք ալ Միւսթարեան) դատարք մը
չեղաւ. երեք եպիսկոպոս և քանի
մը վարդապետք վախճանեցան, նոյն-
պէս շատ տուններու մէջ յաշխարհա-
կանաց մահեր հանդիպեցան, տունաց
յետս կոչման, առանց երկուղի կա-

